ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/2730/02/24 ք. Երևան
6 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Թումասյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ծանոթանալով ըստ հայցի «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 22.01.2024թ. տրված պայմանագրի կատարման մասին ավարտական եզրակացությունն անվավեր ճանաչելու, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ստորագրելուն պարտավորեցնելու և «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին՝ ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ներկայացրած 19.12.2023թ. ստորագրված պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը (Հավելված N 4) տրամադրելու, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հոգուտ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի 63.686.555 (վաթսուներեք միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին, հայցադիմումին և կից փաստաթղթերին

ՊԱՐԶԵՑ

«Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ալինա Ռևազյանը 11.04.2024

թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 22.01.2024թ. տրված պայմանագրի կատարման մասին ավարտական եզրակացությունն անվավեր ճանաչելու, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ստորագրելուն պարտավորեցնելու և «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին՝ ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ներկայացրած 19.12.2023թ. ստորագրված պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը (Հավելված N 4) տրամադրելու, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հոգուտ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի 63.686.555 (վաթսուներեք միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին:

Հայցադիմումը կից փաստաթղթերով դատավոր Ա. Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 12.04.2024 թվականին:
Դատարանի 16.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
17.04.2024 թվականին հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:
Հայցադիմումը կից փաստաթղթերով դատավոր Ա. Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 18.04.2024 թվականին:
Դատարանի 23.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
29.04.2024 թվականին հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:
Հայցադիմումը կից փաստաթղթերով դատավոր Ա. Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 30.04.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝
1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
...,
5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-12-րդ և 14-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը: (...)
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:
Հետևաբար, հայցադիմումն անհրաժեշտ է ընդունել վարույթ՝ այն Դատարանում ընդունված համարելով 11.04.2024 թվականից՝ որոշումն անհապաղ ուղարկելով լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:
Տվյալ դեպքում օրենսդիրը գնումների մասին գործերի քննության համար սահմանել է հատուկ կարգ՝ հնարավորություն ընձեռելով գործին մասնակցող անձանց իրենց բոլոր փաստարկները և ապացույցները ներկայացնել գրավոր ընթացակարգով, որի պայմաններում ապահովվում են մրցակցության և իրավահավասարության սկզբունքները:
Դատական նիստ հրավիրելու իրավական հնարավորությունը օրենսդրի կողմից սահմանված է որպես բացառություն, որի կիրառման անհրաժեշտությունը գնահատում է միայն Դատարանը՝ ելնելով գործի հանգամանքներից:
Հայցվորի ներկայացուցիչը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի դրույթներով, Դատարանին միջնորդել է հրավիրել դատական նիստ՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:
Անդրադառնալով սույն գործը դատական նիստում քննելու մասին Հայցվորի ներկայացուցչի միջնորդությանը՝ Դատարանն արձանագրում է, որ վերջինս չի ներկայացրել որևէ պատճառաբանություն և փաստարկ, որը հիմք կտար նման եզրահանգման գալու համար, ինչ վերաբերում է Դատարանի նախաձեռնությանը, ապա ուսումնասիրելով հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը, գործը դատական նիստում քննելու անհրաժեշտություն Դատարանը դեռևս չի տեսնում, իսկ պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան և ապացույցներ ներկայացվելուց հետո, եթե ի հայտ կգա այդպիսի անհրաժեշտություն, ապա Դատարանը կկայացնի համապատասխան որոշում:
Հետևաբար, Դատարանը քննարկելով Հայցվորի ներկայացուցչի՝ դատական դատական

նիստ հրավիրելու վերաբերյալ միջնորդությունը, գտնում է, որ այն ենթակա է մերժման:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 22.01.2024թ. տրված պայմանագրի կատարման մասին ավարտական եզրակացությունն անվավեր ճանաչելու, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ստորագրելուն պարտավորեցնելու և «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին՝ ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ներկայացրած 19.12.2023թ. ստորագրված պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը (Հավելված N 4) տրամադրելու, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հոգուտ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի 63.686.555 (վաթսուներեք միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին, ընդունել վարույթ՝ այն Դատարանում ընդունված համարելով 11.04.2024 թվականից:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 2024 թվականի հունիսի 19-ը՝ դատական իշխանության պաշտոնական կայքի (www.datalex.am) միջոցով:
3. «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության միջնորդությունը՝ դատական նիստ հրավիրելու վերաբերյալ, մերժել:
4. Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
5. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:
6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Թումասյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.05.06 15:05:44